



**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՆՈՐՄԱՏԻՎ ԱԿՏԵՐԻ
ՏԵՂԵԿԱԳԻՐ**

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՏԱՍԵՐՈՐԴ ՏԱՐԻ N 01(142) 30.01.2017թ.

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ԵՐԿՐՈՐԴ ԲԱԺԻՆ		
	ԼՂՀ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ	
01	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2011 թվականի հունիսի 28-ի թիվ 57Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ԼՂՀ հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի N 52Ն որոշումը.....	4
02	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2009 թվականի փետրվարի 19-ի թիվ 8Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԼՂՀ հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի N 58Ն որոշումը.....	5
03	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2008 թվականի մայիսի 20-ի թիվ 32Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԼՂՀ հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի N 59Ն որոշումը.....	6
04	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2009 թվականի մայիսի 18-ի թիվ 42Ն և 2010 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 72Ն որոշումների մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԼՂՀ հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի N 60Ն որոշումը.....	7
05	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2010 թվականի մայիսի 12-ի թիվ 19Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԼՂՀ հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի N 61Ն որոշումը.....	10
06	«Հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճար վճարողների 2017 թվականի անվանական կազմը և	

	կարգավորման պարտադիր վճարների տարեկան դրույքաչափերը հաստատելու մասին» ԼՂՀ հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի N 70Ն որոշումը.....	11
ԵՐՐՈՐԴ ԲԱԺԻՆ		
ԼՂՀ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ		
07	«Ապահովագրական ընկերությունների (գործակալների) գործունեության վերաբերյալ» ձև թիվ 1-ԱՊՊԱ (եռամսյակային) պետական վիճակագրական հաշվետվության ձևը և լրացման հրահանգը հաստատելու մասին» ԼՂՀ վիճակագրության պետական խորհրդի N 32-Ն որոշումը.....	14
08	«Բանկային գործունեության վերաբերյալ» ձև թիվ 1-ԲԳ (եռամսյակային) պետական վիճակագրական հաշվետվության ձևը և լրացման հրահանգը հաստատելու մասին» ԼՂՀ վիճակագրության պետական խորհրդի N 33-Ն որոշումը.....	19
09	«Վարկերի և ավանդների վերաբերյալ» ձև թիվ 1-ԲԳ (ամսական) պետական վիճակագրական հաշվետվության ձևը և լրացման հրահանգը հաստատելու մասին» ԼՂՀ վիճակագրության պետական խորհրդի N 35-Ն որոշումը.....	26
ՀԻՆԳԵՐՈՐԴ ԲԱԺԻՆ		
ԼՂՀ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀՐԱՄԱՆՆԵՐԸ		
10	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2016 թվականի հունվարի 28-ի N 1-Ն և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարի 2016 թվականի հունվարի 28-ի N 10-Ն համատեղ հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» ԼՂՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի N 1-Ն և ԼՂՀ գյուղատնտեսության նախարարի N 02-Ն համատեղ հրամանը.....	29
11	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2016 թվականի փետրվարի 18-ի N 3-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» ԼՂՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի N 2-Ն հրամանը.....	30
12	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության 2011 թվականի ապրիլի 4-ի N 3-Ն հրամանում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ԼՂՀ ֆինանսների նախարարի N 1-Ն հրամանը.....	31
13	«Անհատ ձեռնարկատիրոջ կողմից եկամտային հարկի կանխավճարի եռամսյակային մեծությունը ինքնուրույն որոշելու մասին հայտարարության ձևը հաստատելու մասին» ԼՂՀ ֆինանսների նախարարի N 2-Ն հրամանը.....	38

	ՀԱՏՈՒԿ ԲԱԺԻՆ	
	ԼՂՀ առողջապահության նախարարի կողմից տրված լիցենզիայի ուժը կորցրած ճանաչելու մասին հրամանի պատճենը.....	40
	ԼՂՀ գյուղատնտեսության նախարարի կողմից տրված լիցենզիայի ուժը կորցրած ճանաչելու մասին հրամանի պատճենը....	41
	ԼՂՀ էկոնոմիկայի նախարարության կողմից դեկտեմբեր ամսում տրամադրված, դադարեցված և կասեցված լիցենզիաների մասին տեղեկություններ.....	42
	ԼՂՀ քաղաքաշինության նախարարության կողմից նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին տրամադրված, դադարեցված և կասեցված լիցենզիաների մասին տեղեկություններ.....	43

**ԼԵՈՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ
ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«22» դեկտեմբերի 2016 թվականի

N 52Ն

ք. Ստեփանակերտ

**ԼԵՈՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՄԻ 28-Ի ԹԻՎ
57Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

«Իրավական ակտերի մասին» Լեռնային Դարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածին համապատասխան՝ Լեռնային Դարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովը **ո ր ո շ ու մ է**.

1. Լեռնային Դարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2011 թվականի հունիսի 28-ի «Լեռնային Դարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2007 թվականի նոյեմբերի 27-ի թիվ 17Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու և Լեռնային Դարաբաղի Հանրապետության էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու մասին» թիվ 57Ն որոշման 8-րդ ենթահավելվածի 3-րդ կետի 1-ին ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1) Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից լիցենզավորված՝ Հայաստանի Հանրապետության կամ Լեռնային Դարաբաղի Հանրապետության տարածքներում գործող որևէ առևտրային բանկ, վարկային հաստատություն կամ ապահովագրական կազմակերպություն,»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՆԱԽԱԳԱՀ

Հ. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
 ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ
 ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«22» դեկտեմբերի 2016 թվականի

N 58Ն

ք. Ստեփանակերտ

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
 ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
 ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 19-Ի ԹԻՎ 8Ն
 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

«Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետին, 27-րդ հոդվածի 1-ին մասին, 28-րդ հոդվածի 2-րդ մասին և «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածին համաձայն՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովը **ո ր ո շ ու մ է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2009 թվականի փետրվարի 19-ի ««Կարաբաղ Տելեկոմ» փակ բաժնետիրական ընկերության կողմից Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում մատուցվող բջջային կապի հետվճարային և կանխավճարային ծառայությունների, ինչպես նաև պրեմիում կարճ հաղորդագրության (SMS) ծառայությունների սակագների սահմանման մասին» թիվ 8Ն որոշման թիվ 1 հավելվածի աղյուսակի՝

«Հետվճարային քարտի սակագներ» բաժնում՝
 ա. 9.1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«

9.1	Բաժանորդավճար ելքային և մուտքային զանգերի դեպքում	1000
-----	---	------

».

բ. 10.1-ին, 10.2-րդ, 10.3-րդ և 10.4-րդ կետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«

10.1	Չանգեր դեպի ՂՏ բջջային ցանց	26
10.2	Չանգեր դեպի ՂՏ անշարժ ցանց	26
10.3	Չանգեր դեպի ՀՀ բջջային ցանց	36
10.4	Չանգեր դեպի ՀՀ անշարժ ցանց	34

».

2) «Կանխավճարային քարտի սակագներ» բաժնի 3.1-ին, 3.2-րդ, 3.3-րդ և 3.4-րդ կետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«

3.1	Չանգեր դեպի ՂՏ բջջային ցանց	31.50
3.2	Չանգեր դեպի ՂՏ անշարժ ցանց	31.50
3.3	Չանգեր դեպի ՀՀ բջջային ցանց	45
3.4	Չանգեր դեպի ՀՀ անշարժ ցանց	40

»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2017 թվականի փետրվարի 1-ից:

ՆԱԽԱԳԱՀ

Հ. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
 ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ
 ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«22» դեկտեմբերի 2016 թվականի

N 59Ն

ք. Ստեփանակերտ

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
 ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
 ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՄԻ 20-Ի ԹԻՎ 32Ն
 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

«Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետին, 27-րդ հոդվածի 1-ին մասին, 28-րդ հոդվածի 2-րդ մասին և «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովը **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է**.

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2008 թվականի մայիսի 20-ի ««Ղարաբաղ Տելեկոմ» փակ բաժնետիրական ընկերության կողմից Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում հանրային էլեկտրոնային հաղորդակցության բնագավառում մատուցվող ծառայությունների սակագները սահմանելու մասին» թիվ 32Ն որոշմամբ սահմանված հավելվածի ցանկի՝ «Անշարժ հեռախոսակապ» բաժնի 3.3-րդ և 3.4-րդ կետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«

3.3	1001 թույլից մինչև 1500 թույլ	5	5	5
3.4	1501 թույլից ավել	5	5	5

»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2017 թվականի փետրվարի 1-ից:

ՆԱԽԱԳԱՀ

Հ. ՂԱՀՐԱՍՄԱՆՅԱՆ

**ԼԵՈՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ
ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«22» դեկտեմբերի 2016 թվականի

N 60Ն

ք. Ստեփանակերտ

**ԼԵՈՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 18-Ի ԹԻՎ 42Ն
ԵՎ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 9-Ի ԹԻՎ 72Ն ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ
ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

«Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետին, 27-րդ հոդվածի 1-ին մասին, 28-րդ հոդվածի 2-րդ մասին և «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովը **ո ր ո շ ու մ է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2009 թվականի մայիսի 18-ի ««Ղարաբաղ Տելեկոմ» փակ բաժնետիրական ընկերության կողմից Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում մատուցվող անշարժ ցանցից դեպի բջջային ցանց կատարած զանգերի սակագները սահմանելու մասին» թիվ 42Ն որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելված N1-ի:

2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2010 թվականի դեկտեմբերի 9-ի ««Ղարաբաղ Տելեկոմ» փակ բաժնետիրական ընկերության կողմից Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում մատուցվող անշարժ ցանցից դեպի անշարժ ցանց կատարած զանգերի սակագները սահմանելու, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2009 թվականի մայիսի 18-ի թիվ 42Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» թիվ 72Ն որոշման հավելված թիվ 1-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելված N 2-ի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2017 թվականի փետրվարի 1-ից:

ՆԱԽԱԳԱՀ

Հ. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ

Հավելված N 1
 Լեռնային Գարաբաղի Հանրապետության հանրային
 ծառայությունները և տնտեսական մրցակցությունը
 կարգավորող պետական հանձնաժողովի
 2016 թվականի դեկտեմբերի 22-ի N 60Ն որոշման

«Հավելված
 Սահմանված է Լեռնային Գարաբաղի Հանրապետության
 հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը
 կարգավորող պետական հանձնաժողովի
 2009 թվականի մայիսի 18-ի թիվ 42Ն որոշմամբ

**ԱՆՇԱՐԺ ՑԱՆՑԻՑ ԴԵՊԻ ԲՁՋԱՅԻՆ ՑԱՆՑ ԿԱՏԱՐԱԾ
 ՁԱՆԳԵՐԻ ՍԱԿԱԳՆԵՐԸ**

Հ/Հ	Անշարժ ցանցից դեպի բջջային ցանց կատարած զանգեր	Մակագինը՝ դրամ/մեկ րոպեի համար (ներառյալ ԱԱՀ)
1.	Ձանգեր Լեռնային Գարաբաղի Հանրապետության բջջային ցանց	26
2.	Ձանգեր Հայաստանի Հանրապետության բջջային ցանց	36

»:

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
 ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ
 ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ
 ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հ. ԹՈՐՈՍՅԱՆ

Հավելված N 2
 Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային
 ծառայությունները և տնտեսական մրցակցությունը
 կարգավորող պետական հանձնաժողովի
 2016 թվականի դեկտեմբերի 22-ի N 60Ն որոշման

«Հավելված
 Սահմանված է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
 հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը
 կարգավորող պետական հանձնաժողովի
 2010 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 72Ն որոշմամբ

**ԱՆՇԱՐԺ ՑԱՆՑԻՑ ԴԵՊԻ ԱՆՇԱՐԺ ՑԱՆՑ ԿԱՏԱՐԱԾ
 ՋԱՆԳԵՐԻ ՍԱԿԱԳՆԵՐԸ**

Հ/Հ	Անշարժ ցանցից դեպի անշարժ ցանց կատարած զանգեր	Սակագինը՝ դրամ/մեկ թույլի համար (ներառյալ ԱԱՀ)
1.	Ջանգեր Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անշարժ ցանց (միջրջանային)	18
2.	Ջանգեր Հայաստանի Հանրապետության անշարժ ցանց	22

»:

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
 ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ
 ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ
 ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱԸԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հ. ԹՈՐՈՍՅԱՆ

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
 ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ
 ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«22» դեկտեմբերի 2016 թվականի

N 61Ն

ք. Ստեփանակերտ

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
 ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
 ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՍԱՅԻՄԻ 12-Ի ԹԻՎ 19Ն
 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

«Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետին, 27-րդ հոդվածի 1-ին մասին, 28-րդ հոդվածի 2-րդ մասին և «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովը **ը ը ը ը ը ը** է.

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2010 թվականի մայիսի 12-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2009 թվականի սեպտեմբերի 17-ի թիվ 56Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու և «Ղարաբաղ Տելեկոմ» փակ բաժնետիրական ընկերության կողմից Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում մատուցվող նոր անլար ֆիքսված միջերես համակարգով հեռախոսակապի ծառայությունների սակագները սահմանելու մասին» թիվ 19Ն որոշման հավելվածի աղյուսակի «Հեռախոսագրույցների թույլեվճար» բաժնի 19.3-րդ, 19.4-րդ, 20-րդ, 20.1-ին, 20.2-րդ կետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«

19.3	Ձանգեր շրջանների, այդ թվում Ստեփանակերտի միջև, սահմանված 250 թույլեվճար անցնելուց հետո	18
19.4	Ձանգեր դեպի ՂՏ բջջային ցանց	26
20	Ձանգեր դեպի ՀՀ ցանց	
20.1	Ձանգեր դեպի ՀՀ բջջային ցանց	36
20.2	Ձանգեր դեպի ՀՀ ֆիքսված ցանց	22

»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2017 թվականի փետրվարի 1-ից:

ՆԱԽԱԳԱՀ

Հ. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ

Գրանցված է
Լեռնային Դարաբաղի Հանրապետության
արդարադատության նախարարության կողմից
2016 թվականի դեկտեմբերի 30-ին
պետական գրանցման համարը 3031699

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ
ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«22» դեկտեմբերի 2016 թվականի

N 70Ն

ք. Ստեփանակերտ

**ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՊԱՐՏԱԴԻՐ
ՎՃԱՐ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԱՆՎԱՆԱԿԱՆ ԿԱԶՄԸ
ԵՎ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՊԱՐՏԱԴԻՐ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ
ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

«Հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարների մասին»
Լեռնային Դարաբաղի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածին և 8-րդ հոդվածի
4-րդ մասին համապատասխան՝ Լեռնային Դարաբաղի Հանրապետության հանրային
ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական
հանձնաժողովը **ո ր ո շ ու մ է.**

1. Հաստատել հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճար
վճարողների 2017 թվականի անվանական կազմը և կարգավորման պարտադիր
վճարների տարեկան դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է ստնում պաշտոնական հրապարակման օրվան
հաջորդող տասներորդ օրը, իսկ դրա գործողությունը տարածվում է 2017 թվականի
հունվարի 1-ից ծագած հարաբերությունների վրա:

ՆԱԽԱԳԱՀ

Հ. ԳԱՀՐԱՄԱՆՅԱՆ

Հավելված
Հաստատված է Լեռնային Դարաբաղի Հանրապետության
հանրային ծառայությունները և տնտեսական
մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի
2016 թվականի դեկտեմբերի 22-ի N 70Ն որոշմամբ

**ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՊԱՐՏԱԳԻՐ ՎՃԱՐ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ
ԱՆՎԱՆԱԿԱՆ ԿԱԶՄԸ ԵՎ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՊԱՐՏԱԳԻՐ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ԴՐՈՒՅՔԱՂԱՓԵՐԸ**

Հ/Հ	Հաշվառման վերցված վճարողները	Իրացման շրջանառու- թյուն (ստանց ԱԱՀ)	Ստանկոմ- վազի	Յուրաքանչյուր ընկերության կարգավորման պարտադիր վճարի տարեկան դրույքաչափը	Որից՝ ըստ եռամսյակների			
					I	II	III	IV
ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԵՏԻԿ ՀԱՄԱԿԱՐԳ (Ընդամենը)					24,784.4	24,784.4	24,784.4	24,783.9
1.	«ԱՐՑԱԽԷՆԵՐԳՈ» ՓԲԸ	10,503,000.0	0.380364	63,682.4	15,920.6	15,920.6	15,920.6	15,920.6
2.	«ԱՐՑԱԽ ՀԷԿ» ԲԲԸ	3,520,000.0	0.127476	21,342.7	5,335.7	5,335.7	5,335.7	5,335.6
3.	«ԻԶՈՏՈՊ ԳԵԼՏԱ» ՍՊԸ	310,000.0	0.011227	1,879.6	469.9	469.9	469.9	469.9
4.	«ՊՐՈՏՈՆ» ՓԲԸ	340,000.0	0.012313	2,061.5	515.4	515.4	515.4	515.3
5.	«ՆԵՏՐԻՆՈ» ՓԲԸ	325,000.0	0.011770	1,970.6	492.7	492.7	492.7	492.6
6.	«ԱԼՖԱՍԱԳ» ՓԲԸ	230,300.0	0.008340	1,396.4	349.1	349.1	349.1	349.1
7.	«ԻՄԱՍՏ» ՍՊԸ	233,000.0	0.008438	1,412.7	353.2	353.2	353.2	353.1
8.	«ՋՈՒՐ -ԷՆԵՐԳԻԱ» ՍՊԸ	663,500.0	0.024029	4,023.0	1,005.8	1,005.8	1,005.8	1,005.6
9.	«ՄԵԳԱՏՈՆ» ՓԲԸ	216,000.0	0.007822	1,309.7	327.4	327.4	327.4	327.5
10.	«ԾՈՎԻՆԱՐ-ՆԱՐԵԿ» ՍՊԸ	9,631.0	0.000349	58.4	14.6	14.6	14.6	14.6
ԳԱԶԱՍՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ (Ընդամենը)					7,521.1	7,521.1	7,521.1	7,521.1
11.	«ԱՐՑԱԽԳԱԶ» ՓԲԸ	4,961,760.5	0.179689	30,084.4	7,521.1	7,521.1	7,521.1	7,521.1
ՋԵՐՄԱՍՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ (Ընդամենը)					286.2	286.2	286.2	286.0
12.	«ՋԵՐՄԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ	188,777.1	0.006837	1,144.6	286.2	286.2	286.2	286.0
ՋՐԱՍՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ (Ընդամենը)					1,000.2	1,000.2	1,000.2	999.8
13.	«ՋՐԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ	67,000.0	0.002426	406.0	101.5	101.5	101.5	101.5
14.	«ՋՐՄՈՒՂ-ԿՈՅՈՒՂ» ՓԲԸ	288,000.0	0.010430	1,746.2	436.6	436.6	436.6	436.4
15.	«ՋՐԱՍՏԱԿԱՐԱՐՈՒՄ ԵՎ ՋՐԱՀԵՌԱՅՈՒՄ» ՓԲԸ	262,500.0	0.009506	1,591.6	397.9	397.9	397.9	397.9
16.	«ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ» ՓԲԸ	42,312.8	0.001532	256.6	64.2	64.2	64.2	64.0
ՀԵՌԱՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՈ (Ընդամենը)					8,103.9	8,103.9	8,103.9	8,103.9
17.	«ԳԱՐԱԲԱՂ ՏԵԼԵԿՈՄ» ՓԲԸ	5,346,231.8	0.193613	32,415.6	8,103.9	8,103.9	8,103.9	8,103.9
ՓՈՍՏԱՅԻՆ ԿԱՊ (Ընդամենը)					31.8	31.8	31.8	31.9
18.	«ԱՐՑԱԽՓՈՍ» ՓԲԸ	21,000.0	0.000761	127.3	31.8	31.8	31.8	31.9
ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՐԱՏՈՐՈՇՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՊԱՐՏԱԳԻՐ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՋՆՆՈՒԹՅԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՍԱԿԱԳՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՈՒ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՈ (Ընդամենը)					128.9	128.9	128.9	128.7
19.	«ՏԵԽՆՈ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ	85,000.0	0.003078	515.4	128.9	128.9	128.9	128.7
ԸՆԴՀԱՆՈՒՐԸ		27,613,013.2	1	167,424.7	41,856.5	41,856.5	41,856.5	41,855.3

ԼԵՈՆԱՅԻՆ ԳԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ
ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԳԵԿԱՎԱՐ

Հ. ԹՈՐՈՍՅԱՆ

Գրանցված է
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
արդարադատության նախարարության կողմից
2017 թվականի հունվարի 23-ին
պետական գրանցման համարը 3011705

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 դեկտեմբերի 2016 թվական

N 32-Ն

ք.Ստեփանակերտ

**«ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (ԳՈՐԾԱԿԱԼՆԵՐԻ)
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ» ՁԵՎ ԹԻՎ 1-ԱՊՊԱ
(ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ) ՊԵՏԱԿԱՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ
ՁԵՎԸ ԵՎ ԼՐԱՑՄԱՆ ՀՐԱՀԱՆԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**


Ղեկավարվելով «Պետական վիճակագրության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի «ե» կետով՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վիճակագրության պետական խորհուրդը **ո ր ո շ ու մ է.**

1. Հաստատել «Ապահովագրական ընկերությունների (գործակալների) գործունեության վերաբերյալ» Ձև թիվ 1-ԱՊՊԱ (եռամսյակային) պետական վիճակագրական հաշվետվության ձևը՝ համաձայն հավելվածի N 1-ի:

2. Հաստատել «Ապահովագրական ընկերությունների (գործակալների) գործունեության վերաբերյալ» Ձև թիվ 1-ԱՊՊԱ (եռամսյակային) պետական վիճակագրական հաշվետվության ձևի լրացման հրահանգը՝ համաձայն հավելվածի N 2-ի:

ՆԱԽԱԳԱՀ՝

Կ.ՆԵՐՍԻՍՅԱՆ



**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ
 ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ**

Ներկայացվում է համաձայն՝ «Պետական վիճակագրության մասին» ԼՂՀ օրենքի, ԼՂՀ վիճակագրության պետական խորհրդի կողմից հաստատված «Պետական վիճակագրական աշխատանքների ծրագրի» և «Պետական վիճակագրական աշխատանքների իրականացման համար վիճակագրական տեղեկությունների ներկայացման» կարգի		
Ներկայացվում է՝	Ներկայացնում են՝	Ներկայացման ժամկետը՝
ԼՂՀ Ազգային վիճակագրական ծառայություն	ԼՂՀ տարածքում գործող ապահովագրական ընկերությունները (գործակալները)	Սինչև եռամսյակին հաջորդող ամսվա 25-ին
ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԱՐՏՆԻՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ ԵՐԱՇԽԱՎՈՐՎՈՒՄ Է ՕՐԵՆՔՈՎ		
Ով է ներկայացնում (անվանումը) _____ Հասցեն _____ Հեռախոսահամար _____		ՉԹՎ ԹԻՎ 1-ԱՊՊԱ (եռամսյակային) Հաստատված է ԼՂՀ վիճակագրության պետական խորհրդի 2016 թվականի դեկտեմբերի 30-ի N 32-Ն որոշմամբ

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ

_____ ապահովագրական ընկերությունների(գործակալների)
 ամփոփ ցուցանիշների վերաբերյալ
 20 ____ թ. _____

(ժամանակահատվածի վերջի դրությամբ, հազար դրամ)

Z/Z	Ցուցանիշների անվանումը	
1	Ապահովագրավճարներ (տող1.1+տող1.2+տող1.3+տող1.4+տող1.5)	
1.1	կյանքի	
1.2	անձնական	
1.3	գույքի	
1.4	պատասխանատվության ապահովագրության գծով	
1.5	այլ	
2	Ապահովագրական հատուցումներ (տող2.1+տող2.2+տող2.3+տող2.4+տող2.5)	
2.1	կյանքի	
2.2	անձնական	
2.3	գույքի	
2.4	պատասխանատվության ապահովագրության գծով	
2.5	այլ	
3	Գործող ապահովագրական պայմանագրերի քանակը (միավոր) (տող3.1+տող3.2)	
3.1	կյանքի	
3.2	ոչ կյանքի	
4	Գործակալին կամ ներկայացուցչին վճարված միջոցորդավճարները	
5	Ընդամենը ծախսեր (տող5.1+տող5.2+տող5.3+տող5.4+տող5.5+տող5.6+տող5.7+տող5.8+տող5.9+ տող5.10+ տող5.11+ տող5.12)	
5.1	Բնական գազ	
5.2	Նավթամթերք (բենզին, դիզելային վառելիք և այլն)	
5.3	Վառելիքի այլ տեսակներ	
5.4	Էներգիա	
5.5	Ջուր	
5.6	Աշխատանքի վարձատրության և դրան հավասարեցված այլ վճարումներ (ներառյալ՝ խթանող և փոխհատուցող վճարները, էկամտային հարկը)	
5.7	Հիմնական միջոցների ամորտիզացիոն մասհանումներ	
5.8	Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիոն մասհանումներ	
5.9	Վարձակալական վճարներ	
5.10	Ներկայացուցչական ծախսեր	
5.11	Գործուղման ծախսեր	
5.12	Այլ ծախսեր	

6	Աշխատողների միջին ցուցակային թվաքանակը (մարդ)	
7	Հարկեր (բյուջե վճարման ենթակա հաշվարկված հարկերի գումարը) =(տող 7.1+տող 7.2+տող 7.3)	
7.1	Նշել	
7.2		
7.3		

Ղեկավար

_____ (ազգանուն, անուն)

_____ (ստորագրություն)

Կ.Տ.

Լրացնող՝

(գլխ. հաշվապահ կամ լիազորված անձ)

_____ (ազգանուն, անուն)

_____ (ստորագրություն)

Լեոնային Ղարաբաղի Հանրապետության
Ազգային վիճակագրական ծառայության
աշխատակազմի ղեկավար՝

Լ. Հարությունյան

**«ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (ԳՈՐԾԱԿԱԼՆԵՐԻ)
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԶԵՎ ԹԻՎ 1-ԱՊՊԱ (ԵՈՍՄՍՑԱԿԱՅԻՆ)
ՊԵՏԱԿԱՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԼՐԱՑՄԱՆ ՀՐԱՀԱՆԳ**

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն հրահանգը սահմանում է «Ապահովագրական ընկերությունների (գործակալների) գործունեության վերաբերյալ» Ձև թիվ 1-ԱՊՊԱ (եռամսյակային) պետական վիճակագրական հաշվետվության (այսուհետ՝ հաշվետվություն) լրացման կարգը:

2. Տրամադրված տեղեկությունների գաղտնիությունը երաշխավորվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ:

3. Հաշվետվությունը ներկայացնում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում գործող ապահովագրական ընկերությունները (գործակալները):

4. Հաշվետվությունը ներկայացվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության՝ ըստ հաշվետվությունում նշված ժամկետների և պարբերականության:

5. Պետական վիճակագրության մասին օրենսդրության խախտումը վիճակագրական տեղեկություններ տրամադրողների, ինչպես նաև պետական վիճակագրություն իրականացնող մարմնի պաշտոնատար անձանց համար առաջացնում է պատասխանատվություն՝ օրենքով սահմանված կարգով:

6. Վիճակագրական տեղեկությունների ներկայացման հետ կապված այլ խնդիրները կարգավորվում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ:

II. ՄԵԹՈՂԱԲԱՆԱԿԱՆ ՊԱՐՁԱԲԱՆՈՒՄՆԵՐ

7. **Ապահովագրավճար** է համարվում ապահովագրության համար նախատեսվող այն գումարը, որն ապահովադիրը կամավոր ապահովագրության դեպքում՝ ապահովագրության պայմանագրի, պարտադիր ապահովագրության դեպքում՝ օրենսդրությանը համապատասխան, պարտավոր է մուծել ապահովագրողին:

8. **Ապահովագրական հատուցումն** այն գումարն է, որն ապահովագրողները վճարում են ապահովադիրին կամ շահառուներին ապահովագրության պայմանագրով նախատեսված ապահովագրական պատահարի հետևանքով առաջացած փաստացի վնասի կամ կորուստների դիմաց:

9. **Կյանքի ապահովագրություն**՝ ապահովագրված անձի կյանքի, լրակեցության (անձի որոշակի տարիքի հասնելու), կենսաթոշակային ապահովագրության, ինչպես նաև նրա կյանքում որոշակի իրադարձության (կենսաթոշակային տարիքի հասնելը, ամուսնությունը, մահը և այլն) երևան գալու հետ կապված ապահովագրություն, երբ ապահովագրական պատահարին բնորոշ է պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում ի հայտ գալու որոշակի հավանականությունն ու պատահականությունը, իսկ ապահովագրության պայմանագրի ժամկետի ավարտին՝ ապահովագրական պատահարի պարտադիր տեղի ունենալը, այն է՝ պայմանագրի գործողության ժամկետի ավարտը (կյանքի ապահովագրության տեսակներ):

10. **Անձնական ապահովագրություն**՝ ապահովագրական պատահարի հետևանքով ապահովադիրների կամ ապահովագրված անձանց կյանքին, առողջությանը կամ աշխատունակությանը վնաս պատճառելու, ինչպես նաև նրանց կյանքում որոշակի իրադարձության երևան գալու (կենսաթոշակային տարիքի հասնելը, ամուսնությունը, մահը և այլն) դեպքերում ապահովագրական գումարի վճարման հետ (անձնական ապահովագրության տեսակներ) կապված ապահովագրություն:

11. **Գույքային ապահովագրություն**՝ ապահովագրական պատահարի հետևանքով ապահովադիրի կամ շահառուի գույքային շահերի՝ գույքի տիրապետման կամ օգտագործման կամ տնօրինման ժամանակ առաջացած վնասների կամ կորստի դեպքում ապահովագրական հատուցման հետ (գույքային ապահովագրության տեսակներ) կապված ապահովագրություն:

12. **Պատասխանատվության ապահովագրություն**՝ ապահովադիրի կամ ապահովագրված անձի կողմից երրորդ անձանց կամ նրանց գույքին պատճառված

վնասի ապահովագրական հատուցման կամ ապահովագրական գումարի վճարման հետ (պատասխանատվության ապահովագրության տեսակներ) կապված ապահովագրություն:

13. **Ոչ կյանքի ապահովագրություն**՝ կյանքի ապահովագրության տարրեր չպարունակող անձնական ապահովագրության, ինչպես նաև գույքային և պատասխանատվության ապահովագրության տեսակները ներառող (ոչ կյանքի ապահովագրության տեսակներ) ապահովագրություն:

14. **Ապահովագրական գործակալ**՝ ապահովագրողի անունից և նրա հանձնարարությամբ բացատրական աշխատանքների կամ օրենսդրությամբ չարգելված այլ գործողությունների միջոցով, ապահովադիրների հետ ապահովագրական պայմանագրերի կամ վկայագրերի կնքման հետ կապված աշխատանքներ իրականացնող՝ ապահովագրողների հետ աշխատանքային հարաբերությունների մեջ գտնվող ֆիզիկական անձ:

15. **Ապահովագրության պայմանագիր**՝ ապահովագրողի և ապահովադրի միջև առաջացող հարաբերությունները կարգավորող և նրանց միջև կնքվող գրավոր համաձայնություն, ըստ որի սահմանված ժամկետում ապահովադրի կողմից վճարվող ապահովագրավճարների դիմաց ապահովագրողը պարտավորվում է ապահովագրական պատահարի առաջացման դեպքում կատարել ապահովագրական հատուցում կամ վճարել ապահովագրական գումար ապահովադրին կամ այն անձին, որի օգտին կնքվել է պայմանագիրը:

III. ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

16. Տող 1-ը՝ Ապահովագրավճարներ, ներառում է 1.1՝ կյանքի, 1.2՝ անձնական, 1.3՝ գույքի, 1.4՝ պատասխանատվության ապահովագրության գծով և 1.5՝ այլ տողերը:

17. Տող 2-ը՝ Ապահովագրական հատուցումներ, ներառում է 2.1՝ կյանքի, 2.2՝ անձնական, 2.3՝ գույքի, 2.4՝ պատասխանատվության ապահովագրության գծով և 1.5՝ այլ տողերը:

18. Տող 3-ը՝ Գործող ապահովագրական պայմանագրերի քանակը (միավոր), ներառում է 3.1՝ կյանքի և 3.2՝ ոչ կյանքի տողերը:

19. Տող 5-ը՝ Ընդամենը ծախսեր, ներառում է 5.1՝ Բնական գազ, 5.2՝ Նավթամթերք (բենզին, դիզելային վառելիք և այլն), 5.3՝ Վառելիքի այլ տեսակներ, 5.4՝ Էներգիա, 5.5՝ Ջուր, 5.6՝ Աշխատանքի վարձատրության և դրան հավասարեցված վճարումներ (ներառյալ՝ խթանող և փոխհատուցող վճարները, եկամտային հարկը), 5.7՝ Հիմնական միջոցների ամորտիզացիոն մասհանումներ, 5.8՝ Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիոն մասհանումներ, 5.9՝ Վարձակալական վճարներ, 5.10՝ Ներկայացուցչական ծախսեր, 5.11՝ Գործուղման ծախսեր, 5.12՝ Այլ ծախսեր տողերը:

20. Հաշվետվությունը լրացվում է հաշվետու ժամանակահատվածի վերջի դրությամբ:

**Լեոնային Ղարաբաղի Հանրապետության
Ազգային վիճակագրական ծառայության
աշխատակազմի ղեկավար՝**

Լ. Հարությունյան

Գրանցված է
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
արդարադատության նախարարության կողմից
2017 թվականի հունվարի 23-ին
պետական գրանցման համարը 3011706

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 դեկտեմբերի 2016 թվական

N 33-Ն

ք.Ստեփանակերտ

**«ԲԱՆԿԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ՁԵՎ ԹԻՎ 1-ԲԳ
(ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ) ՊԵՏԱԿԱՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ
ՁԵՎԸ ԵՎ ԼՐԱՑՄԱՆ ՀՐԱՀԱՆԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Պետական վիճակագրության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի «ե» կետով՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վիճակագրության պետական խորհուրդը **ո թ ո շ ու մ է.**

1. Հաստատել «Բանկային գործունեության վերաբերյալ» Ձև թիվ 1-ԲԳ (եռամսյակային) պետական վիճակագրական հաշվետվության ձևը՝ համաձայն հավելված N 1-ի:

2. Հաստատել «Բանկային գործունեության վերաբերյալ» Ձև թիվ 1-ԲԳ (եռամսյակային) պետական վիճակագրական հաշվետվության ձևի լրացման հրահանգը՝ համաձայն հավելված N 2-ի:

ՆԱԽԱԳԱՀ՝

Կ.ՆԵՐՍԻՍՅԱՆ



**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ
 ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ**

Ներկայացվում է համաձայն՝ «Պետական վիճակագրության մասին» ԼՂՀ օրենքի, ԼՂՀ վիճակագրության պետական խորհրդի կողմից հաստատված «Պետական վիճակագրական աշխատանքների ծրագրի» և «Պետական վիճակագրական աշխատանքների իրականացման համար վիճակագրական տեղեկությունների ներկայացման» կարգի		
Ներկայացվում է՝	Ներկայացնում են՝	Ներկայացման ժամկետը՝
ԼՂՀ Ազգային վիճակագրական ծառայություն	ԼՂՀ տարածքում գործող առևտրային բանկերը, ՀՀ առևտրային բանկերի ԼՂՀ տարածքում գործող մասնաճյուղերը	մինչև հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 5-ը
ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԱՂՏՆԻՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ ԵՐԱՇԽԱՎՈՐՎՈՒՄ Է ՕՐԵՆՔՈՎ		
Ով է ներկայացնում (անվանումը) _____ Հասցեն _____ Հեռախոսահամար _____		ՉԵՎ ԹԻՎ 1-ԲԳ (եռամսյակային) Հաստատված է ԼՂՀ վիճակագրության պետական խորհրդի 2016 թվականի դեկտեմբերի 30-ի N 33-Ն որոշմամբ

**ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ
 քանկային գործունեության վերաբերյալ**

		/հազ. դրամ/ Հաշվետու ժամանակաշրջան առ 01... 20 թ.	Նախորդ ժամանակաշրջան առ 01... 20 թ.
1	Վարկային ներդրումներ այդ թվում՝		
1.1	կարճաժամկետ որից՝		
1.1.1	դրամով		
1.1.2	արտարժույթով		
1.2	երկարաժամկետ որից՝		
1.2.1	դրամով		
1.2.2	արտարժույթով		
2	Վարկեր՝ ըստ տնտեսության ճյուղերի		
2.1	արդյունաբերություն		
2.2	գյուղատնտեսություն		
2.3	շինարարություն		
2.4	առևտուր		
2.5	այլ ճյուղեր		
3	Վարկեր՝ ըստ տնտեսության հատվածների <i>ռեզիդենտներին</i>		
3.1	դրամով		
3.1.1	դրամով		
3.1.2	արտարժույթով այդ թվում՝		
3.1.3	կազմակերպություններին		
3.1.3.1	<i>դրամով</i>		
3.1.3.1.1	մասնավոր		
3.1.3.1.2	պետական		
3.1.3.2	<i>արտարժույթով</i>		
3.1.3.2.1	մասնավոր		
3.1.3.2.2	պետական		
3.1.4	տնային տնտեսություններին		
3.1.4.1	դրամով		
3.1.4.2	արտարժույթով		
3.1.5	շահույթ չհետապնդող կազմակերպություններին		
3.1.5.1	դրամով		
3.1.5.2	արտարժույթով		
3.1.6	Այլ ֆինանսական կազմակերպություններին		
3.1.6.1	դրամով		

Հ/Հ		Հաշվետու ժամանակաշրջան առ 01.... 20 թ.	Նախորդ ժամանակաշրջան առ 01..... 20 թ.
3.1.6.2	արտարժույթով		
3.2	<i>ոչ ռեզիդենտներին</i>		
3.2.1	դրամով		
3.2.2	արտարժույթով		
4	Ֆիզիկական անձանց տրամադրված վարկերը		
4.1	ձեռնարկատիրական գործնետություն իրականացնելու նպատակով		
4.2	սպառողական նպատակով		
5	Ժամկետանց վարկերի ծավալը		
5.1	կարճաժամկետ		
5.2	երկարաժամկետ		
6	Երկարաձգված վարկերի ծավալը		
6.1	կարճաժամկետ		
6.2	երկարաժամկետ		
7	Վարկերի դիմաց միջին տոկոսադրույքը		
8	Ավանդների միջին տոկոսադրույքը		
9	Ռ-ԵՊՈ գործառնությունների տոկոսադրույքներ		
10	Վարկերի դիմաց ստացված տոկոսավճարը այդ թվում`		
10.1	Ֆիզիկական անձանցից		
11	Վարկերի մարում այդ թվում`		
11.1	դրամով		
11.1.1	Ֆիզիկական անձանցից		
11.1.2	արտարժույթով		
11.1.2.1	Ֆիզիկական անձանցից		
12	Ֆիզիկական անձանց ավանդների հավելածը		
13	Ավանդների գումարն (մնացորդն), ըստ տնտեսության հատվածների		
13.1	<i>ոչ ռեզիդենտներին</i>		
13.1.1	դրամով		
13.1.2	արտարժույթով		
13.2	<i>ռեզիդենտներին</i>		
13.2.1	դրամով		
13.2.1.1	ցպահանջ (ներառյալ հաշիվները)		
13.2.1.1.1	կազմակերպություններին		
13.2.1.1.1.1	մասնավոր		
13.2.1.1.1.2	պետական		
13.2.1.1.2	տնային տնտեսություններին		
13.2.1.1.3	շահույթ չհետապնդող կազմակերպություններին		
13.2.1.1.4	այլ ֆինանսական կազմակերպություններին		
13.2.1.2	ժամկետային		
13.2.1.2.1	կազմակերպություններին		
13.2.1.2.1.1	մասնավոր		
13.2.1.2.1.2	պետական		
13.2.1.2.2	տնային տնտեսություններին		
13.2.1.2.3	շահույթ չհետապնդող կազմակերպություններին		
13.2.1.2.4	այլ ֆինանսական կազմակերպություններին		
13.2.2	արտարժույթով		
13.2.2.1	ցպահանջ (ներառյալ հաշիվները)		
13.2.2.1.1	կազմակերպություններին		
13.2.2.1.1.1	մասնավոր		
13.2.2.1.1.2	պետական		
13.2.2.1.2	տնային տնտեսություններին		
13.2.2.1.3	շահույթ չհետապնդող կազմակերպություններին		
13.2.2.1.4	այլ ֆինանսական կազմակերպություններին		
13.2.2.2	ժամկետային		
13.2.2.2.1	կազմակերպություններին		
13.2.2.2.1.1	մասնավոր		
13.2.2.2.1.2	պետական		
13.2.2.2.2	տնային տնտեսություններին		
13.2.2.2.3	շահույթ չհետապնդող կազմակերպություններին		
13.2.2.2.4	այլ ֆինանսական կազմակերպություններին		
14	Ֆիզիկական անձանց ավանդների գումարը (մնացորդը)		
14.1	ցպահանջ		
14.2	ժամկետային		

Հ/Հ		Հաշվետու ժամանակաշրջան առ 01.... 20 թ.	Նախորդ ժամանակաշրջան առ 01..... 20 թ.
14.3	նպատակային՝ երեխաների համար		
15	Ֆիզիկական անձանց ավանդների քանակը		
15.1	ցպահանջ		
15.2	ժամկետային		
15.3	նպատակային՝ երեխաների համար		
16	Ֆիզիկական անձանց ավանդների դիմաց վճարված տոկոսագումարը		
17	Գանձապետական պարտավորություն- ների և այլ արժեթղթերի ձեռքբերումը		
	այդ թվում՝		
17.1	ֆիզիկական անձանց կողմից		
18	Գանձապետական պարտատոմսերի և այլ արժեթղթերից ստացված եկամուտը		
	այդ թվում՝		
18.1	ֆիզիկական անձանց կողմից		
19	Ֆիզիկական անձանց կողմից գնված արտարժույթ		
20	Ֆիզիկական անձանց կողմից վաճառված արտարժույթ		
21	Ստացված արտահանրապետական դրամական փոխանցումները		
21.1	ֆիզիկական անձինք		
21.2	իրավաբանական անձինք		
22	Ուղարկված արտահանրապետական դրամական փոխանցումներ		
22.1	ֆիզիկական անձանց կողմից		
22.2	իրավաբանական անձանց կողմից		
23	Հաճախորդների թիվը		
23.1	ֆիզիկական անձինք		
23.2	իրավաբանական անձինք		
24	Հաշիվների քանակը.		
24.1	ֆիզիկական անձինք		
24.2	իրավաբանական անձինք		
25	Դրամարկղային շրջանառություն		
25.1	մուտքեր		
25.1.1	<i>որից՝ արտարժույթի վաճառքից</i>		
25.2	ծախսեր		
25.2.1	<i>որից՝ արտարժույթը գնելու համար</i>		
25.3	ծախսերի գերազանցումը մուտքերի նկատմամբ		
25.3.1	<i>որից՝ արտարժույթի առուվաճառքի ծախսերի գերազանցումը մուտքերի նկատմամբ</i>		

Ղեկավար

_____ (ազգանուն, անուն)

_____ (ստորագրություն)

Կ.Տ.

Լրացնող՝

(զլխ.հաշվապահ
կամ լիազորված անձ)

_____ (ազգանուն, անուն)

_____ (ստորագրություն)

Լեոնային Ղարաբաղի Հանրապետության
Ազգային վիճակագրական ծառայության
աշխատակազմի ղեկավար՝

Լ. Հարությունյան

**«ԲԱՆԿԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ» ՁԵՎ ԹԻՎ 1-ԲԳ
(ԵՌԱՍՄՅԱԿԱՅԻՆ) ՊԵՏԱԿԱՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԼՐԱՑՄԱՆ
ՀՐԱՀԱՆԳ**

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն հրահանգը սահմանում է «Բանկային գործունեության վերաբերյալ» Ձև թիվ 1-ԲԳ (եռամյակային) պետական վիճակագրական հաշվետվության (այսուհետ՝ հաշվետվություն) լրացման կարգը:
2. Տրամադրված տեղեկությունների գաղտնիությունը երաշխավորվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ:
3. Հաշվետվությունը ներկայացնում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում գործող առևտրային բանկերը, Հայաստանի Հանրապետության առևտրային բանկերի Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում գործող մասնաճյուղերը:
4. Հաշվետվությունը ներկայացվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության՝ ըստ հաշվետվությունում նշված ժամկետների և պարբերականության:
5. Պետական վիճակագրության մասին օրենսդրության խախտումը վիճակագրական տեղեկություններ տրամադրողների, ինչպես նաև պետական վիճակագրություն իրականացնող մարմնի պաշտոնատար անձանց համար առաջացնում է պատասխանատվություն՝ օրենքով սահմանված կարգով:
6. Վիճակագրական տեղեկությունների ներկայացման հետ կապված այլ խնդիրները կարգավորվում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ:

II. ՄԵԹՈՂԱԲԱՆԱԿԱՆ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐ

7. **Վարկային ներդրումները** բանկային համակարգի կողմից տնտեսությանը տրամադրված վարկերի գծով մնացորդներն են: **Վարկային ներդրումների** մեջ չեն ներառվում ժամկետանց և երկարաձգված վարկերի ծավալները:
8. **Վարկային ներդրումները** բաժանվում են կարճաժամկետի և երկարաժամկետի: **Կարճաժամկետ վարկային ներդրումները** դրանք վարկային ներդրումներն են տրամադրված մեկ տարուց պակաս ժամկետով: **Երկարաժամկետ վարկային ներդրումները** դրանք վարկային ներդրումներն են տրամադրված մեկ տարուց ավել ժամկետով:
9. **Վարկերը՝ ըստ տնտեսության ճյուղերի՝** բանկային համակարգի կողմից ըստ տնտեսության ճյուղերի տրամադրված վարկերի գծով մնացորդներն են:
Վարկերը՝ ըստ տնտեսության հատվածների՝ բանկային համակարգի կողմից ըստ տնտեսության հատվածների վարկերի գծով մնացորդներն են: **Վարկերի** մեջ ներառվում են վարկային ներդրումների, ժամկետանց և երկարաձգված վարկերի ծավալները:
10. **Ցպահանջ ավանդները** բանկերի պահպանմանը հանձնված և որևէ գործարք իրականացնելիս հանվող միջոցներն են:
11. **Ժամկետային ավանդները** բանկերում որոշակի ժամկետով ձևակերպվող ավանդներն են:
12. **Նպատակային՝ երեխաների համար ավանդները** բանկերում պետության կողմից մինչև 18 տարին լրանալը երեխային տրամադրված ավանդն է:

III. ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

13. Տող 1-ը՝ Վարկային ներդրումները, ներառում է 1.1՝ կարճաժամկետ և 1.2՝ երկարաժամկետ տողերը:
14. Տող 1.1-ը ներառում է կարճաժամկետ վարկային ներդրումները 1.1.1՝ դրամով և 1.1.2՝ արտարժույթով տողերը:

15. Տող 1.2-ը ներառում է երկարաժամկետ վարկային ներդրումները 1.2.1՝ դրամով և 1.2.2՝ արտարժույթով տողերը:

Տող 1-ի՝ Վարկային ներդրումների, 5-ի՝ Ժամկետանց վարկերի ծավալի և 6-ը՝ Երկարաձգված վարկերի տողերի ծավալի հանրագումարը պետք է համընկնի համապատասխանաբար 2-ը՝ Վարկերը՝ ըստ տնտեսության ճյուղերի և 3-ը՝ Վարկերը՝ ըստ տնտեսության հատվածների տողերի վարկերի ծավալին:

16. Տող 2-ը՝ Վարկերը՝ ըստ տնտեսության հատվածների, ներառում է 2.1՝ արդյունաբերությունը, 2.2՝ գյուղատնտեսությունը, 2.3՝ շինարարությունը, 2.4՝ առևտուրը, 2.5՝ այլ ճյուղերը տողերը:

17. Տող 3-ը՝ Վարկերը՝ ըստ տնտեսության հատվածների, ներառում է 3.1՝ ռեզիդենտներին և 3.2՝ ոչ ռեզիդենտներին տողերը: Տող 3-ը՝ Վարկերը՝ ըստ տնտեսության հատվածների, միաժամանակ ներառում է 3.1.3՝ կազմակերպությունների, 3.1.4՝ տնային տնտեսություններին, 3.1.5՝ շահույթ չհետապնդող կազմակերպություններին, 3.1.6՝ այլ ֆինանսական կազմակերպություններին տողերը:

18. Տող 3.1-ը՝ ռեզիդենտներին, ներառում է 3.1.1՝ դրամով և 3.1.2՝ արտարժույթով տողերը:

19. Տող 3.1.3-ը՝ կազմակերպությունների, ներառում է 3.1.3.1՝ դրամով և 3.1.3.2՝ արտարժույթով տողերը:

20. Տող 3.1.3.1-ը՝ դրամով, ներառում է 3.1.3.1.1՝ մասնավոր և 3.1.3.1.2՝ պետական տողերը:

21. Տող 3.1.3.2-ը՝ արտարժույթով, ներառում է 3.1.3.2.1՝ մասնավոր և 3.1.3.2.2՝ պետական տողերը:

22. Տող 3.1.4-ը՝ տնային տնտեսություններին, ներառում է տող 3.1.4.1՝ դրամով և տող 3.1.4.2՝ արտարժույթով:

23. Տող 3.1.5-ը՝ շահույթ չհետապնդող կազմակերպություններին, ներառում է 3.1.5.1՝ դրամով և 3.1.5.2՝ արտարժույթով տողերը:

24. Տող 3.1.6-ը՝ այլ ֆինանսական կազմակերպություններին, ներառում է 3.1.6.1՝ դրամով և 3.1.6.2՝ արտարժույթով տողերը:

25. Տող 3.2-ը՝ ոչ ռեզիդենտներին, ներառում է 3.2.1՝ դրամով և 3.2.2՝ արտարժույթով տողերը:

26. Տող 3.1.1-ը՝ դրամով, ներառում է 3.1.3.1՝ դրամով, 3.1.4.1՝ դրամով, 3.1.5.1՝ դրամով, 3.1.6.1՝ դրամով տողերը:

27. Տող 3.1.2-ը՝ արտարժույթով, ներառում է 3.1.3.2՝ արտարժույթով, 3.1.4.2՝ արտարժույթով, 3.1.5.2՝ արտարժույթով, 3.1.6.2՝ արտարժույթով տողերը:

28. Տող 4-ը՝ Ֆիզիկական անձանց տրամադրված վարկերը, ներառում է 4.1՝ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու նպատակով և 4.2՝ սպառողական նպատակով տողերը: Տող 4-ը՝ Ֆիզիկական անձանց տրամադրված վարկերը, պետք է համընկնի տող 3-ի՝ Վարկերը՝ ըստ տնտեսության հատվածների, տող 3.1.4՝ տնային տնտեսություններին տրամադրված վարկերի ծավալին:

29. Տող 5-ը՝ Ժամկետանց վարկերի ծավալը, ներառում է 5.1՝ կարճաժամկետ և 5.2՝ երկարաժամկետ տողերը:

30. Տող 6-ը՝ Երկարաձգված վարկերի ծավալը, ներառում է 6.1՝ կարճաժամկետ և 6.2՝ երկարաժամկետ տողերը:

31. Տող 13-ը՝ Ավանդների գումարը (մնացորդը), ըստ տնտեսության հատվածների, ներառում է 13.1՝ ոչ ռեզիդենտներին և 13.2՝ ռեզիդենտներին տողերը:

32. Տող 13.1-ը՝ ոչ ռեզիդենտներին, ներառում է 13.1.1՝ արտարժույթով և 13.1.2՝ դրամով տողերը:

33. Տող 13.2-ը՝ ռեզիդենտներին, ներառում է 13.2.1՝ դրամով և 13.2.2՝ արտարժույթով տողերը:

34. Տող 13.2.1-ը՝ դրամով, ներառում է 13.2.1.1՝ ցպահանջ և 13.2.1.2՝ ժամկետային տողերը:

35. Տող 13.2.1.1-ը՝ ցպահանջ (ներառյալ հաշիվները), ներառում է 13.2.1.1.1՝ կազմակերպություններին, 13.2.1.1.2՝ տնային տնտեսություններին, 13.2.1.1.3՝ շահույթ չհետապնդող կազմակերպություններին, 13.2.1.1.4՝ այլ ֆինանսական կազմակերպություններին տողերը:

36. Տող 13.2.1.1.1-ը՝ կազմակերպություններին, ներառում է 13.2.1.1.1.1՝ մասնավոր և 13.2.1.1.1.2՝ պետական տողերը:

37. Տող 13.2.1.2-ը՝ ժամկետային, ներառում է 13.2.1.2.1՝ կազմակերպություններին, 13.2.1.2.2՝ տնային տնտեսություններին, 13.2.1.2.3՝ շահույթ չհետապնդող կազմակերպություններին, 13.2.1.2.4՝ այլ ֆինանսական կազմակերպություններին տողերը:

38. Տող 13.2.1.2.1՝ կազմակերպություններին, ներառում է 13.2.1.2.1.1՝ մասնավոր և 13.2.1.2.1.2՝ պետական տողերը:

39. Տող 13.2.2-ը՝ արտարժույթով, ներառում է 13.2.2.1՝ ցպահանջ և 13.2.2.2՝ ժամկետային տողերը:

40. Տող 13.2.2.1-ը՝ ցպահանջ (ներառյալ հաշիվները), ներառում է 13.2.2.1.1՝ կազմակերպություններին, 13.2.2.1.2՝ տնային տնտեսություններին, 13.2.2.1.3՝ շահույթ չհետապնդող կազմակերպություններին, 13.2.2.1.4՝ այլ ֆինանսական կազմակերպություններին տողերը:

41. Տող 13.2.2.1.1-ը՝ կազմակերպություններին, ներառում է 13.2.2.1.1.1՝ մասնավոր և 13.2.2.1.1.2՝ պետական տողերը:

42. Տող 13.2.2.2-ը՝ ժամկետային, ներառում է 13.2.2.2.1՝ կազմակերպություններին, 13.2.2.2.2՝ տնային տնտեսություններին, 13.2.2.2.3՝ շահույթ չհետապնդող կազմակերպություններին, 13.2.2.2.4՝ այլ ֆինանսական կազմակերպություններին տողերը:

43. Տող 13.2.2.2.1-ը՝ կազմակերպություններին, ներառում է 13.2.2.2.1.1՝ մասնավոր և 13.2.2.2.1.2՝ պետական տողերը:

44. Տող 14՝ Ֆիզիկական անձանց ավանդների գումարը (մնացորդը), ներառում է 14.1՝ ցպահանջ, 14.2՝ ժամկետային, 14.3՝ նպատակային՝ երեխաների համար տողերը:

45. Տող 15-ը՝ Ֆիզիկական անձանց ավանդների քանակը, ներառում է 15.1՝ ցպահանջ, 15.2՝ ժամկետային, 15.3՝ նպատակային՝ երեխաների համար տողերը:

46. Տող 21-ը՝ Ստացված արտահանրապետական դրամական փոխանցումներ, ներառում է 21.1՝ ֆիզիկական անձինք և 21.2՝ իրավաբանական անձինք տողերը: Տող 21՝ Ստացված արտահանրապետական դրամական փոխանցումներ, դրանք փոխանցումներ են ստացված Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում:

47. Տող 22-ը՝ Ուղարկված արտահանրապետական դրամական փոխանցումներ, ներառում է 22.1՝ ֆիզիկական անձինք և 22.2՝ իրավաբանական անձինք տողերը: Տող 22՝ Ուղարկված արտահանրապետական դրամական փոխանցումները, դրանք փոխանցումներ են ուղարկված Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքից:

48. Տող 23-ը՝ Հաճախորդների թիվը, ներառում է 23.1՝ ֆիզիկական անձինք և 23.2՝ իրավաբանական անձինք տողերը:

